

արգելքներով՝ մանաւանդ լեռնոտ և անտառախիտ վայրերում: Աւտո և օդատւէտ է: որ այն տեղից, ուր որ օդապարիկը նշմարուի, մերձաւոր կենդրոնավայրերին հեռագրուի: Զոր օր. ասենք թէ մի օդապարիկ, հարաւից գալով, զկնի ճաշու 2 ժամին, անցնում է X տեղի 2000 մետր (մօտ 2 վերստ) բարձրութեան վերայ, որով հաւանական է դառնում, թէ մօտաւորապէս օդապարիկը ուր կարող է իջնել, եթէ մի այսպիսի անմարդ օդապարիկ գտնուի: հարկաւոր է իւր բոլոր գործիքներով լաւ ծրարել և նախնական տեղը վերադարձնել: Այսպիսի գէպքերում շնորհքով վարուելու համար, կարգադրել են, որ իւրաքանչիւր օդապարիկ ունենայ մի մի գրօշակ՝ վերան մի քանի լեզուներով հետեւեալ բառեր գրած. «Զ.գոյշ, Հանգցրեցէք կրակը, լուցկին, ծխաքարը, ծխափողը: 25 բուրլի վարձատրութիւն. վեր առէք զեղին քսակը և կարգացէք»: Այդ քսակի մէջ գտնուած հրահանգութիւնը նկարագրում է օդապարիկը դատարկելու և գործիքները խնամով ծրարելու հանգամանքները: Յոյս կայ, որ այսպիսի միջադէպին օդաչուութիւնները մեծամեծ բարիքների պատճառ պիտի դառնան:

* *

Կարկասաւորեալ առաջն ստեղծու փորձեր. Յայտնի է թէ երբեմն կարկուտը ինչ աւերումներ է գործում այգիներում և արտերում: Աւտորիայում՝ այժմ այդ թշուառութիւնից զգուշանում են Շտիգերի հետեւեալ փորձերով: Կարկուտից վնասուող վայրերի ամենարարձր տեղերում կայաններ են շինում՝ ստեպ ստեպ միախուռն հրացանութեան համար: Կայանների մէջ պահուած են սանդաձև 3—5 փիթանոց փոքրիկ ուժընկեց հրետանիներ, որոնք կոչվում են մարտիս=սանդարտ: Իսկ կայարանների տանիքի մէջ հաստատուած են մեծ մեծ (օգ. սղմող) ձագարներ, որոնց տակ որ սանդարներ են դրվում և այնպէս վառօդ են պայթեցնում՝ ուղահայեաց գէպի վեր: Փորձերը ցոյց են տալիս, որ շարունակ մի քանի պայթումներից կարկտի ամպերը պատռվում են, որով այլ ևս կարկուտ չի կազմվում: Միայն հարկաւոր է որ հրացանութիւնը շարունակուի անընդհատ, նոյն իսկ անձրև տեղալու ժամանակ, ծաքացած և սղմուած օպի ներգործութիւնը ամպերի վերայ տարածվում է 300—400 մետր հեռաւորութեամբ գէպի վեր: Իսկ թէ մի տեղում պատռուած կարկտի ամպը արդեօք ուրիշ տեղում չի՞ հաւաքուի և այն տեղից կարկուտ չի՞ թափի: —այդ բանի երկիւղ չկայ. վասն զի մի անգամ պատռուած ամպը՝ այլ ևս ոչ մի փտանգ չի սպառնում ոչ մի կողմին: Հրացանութեան յաջողութեան համար հարկաւոր է, որ իւրաքանչիւր վայրում 6—8 կայան լինի կառուցած, իսկ կայաններում վեց վեց սանդարներ պատրաստ լինին: Երևի

թէ այգեգործութիւնը և առ հասարակ գիւղական տնտեսութիւնը մեծ օգուտ պիտի քաղի այս էժանագին հնարից (տախտակից շինած կայանը հազիւ 100 բուրլի է նստում):

* *

Աշխարհի շուրջ ճանապարհորդելու բոշակ: Մի աշխարհ բարեգործ Փարիզի համալսարանի խորհրդական տրամադրութեան ներքոյ է դրել 75,000 ֆր., որպէս զի աշխարհքի շուրջ ճանապարհորդելու համար 5 թոշակ կարգուի—իւրաքանչիւրը 15,000 ֆր. քանակութեամբ: Թոշակաւունները առաւելապէս ուսուցիչներից պիտի ընտրուին և 15—18 ամիս ժամանակ պիտի նստին այս ճանապարհորդութեան այն վախճանով, որ իւրեանց մօտաւոր հորիզոնը լայնացնեն և առ տեղեւան ուսումնասիրեն զանազան ազգերի ընկերական կեանքը: «Վասն զի» այսպէս իմաստնարար է խորհրդածում բարեգործը, «կրթուած պատանիների ուսուցիչները պէտք է զրահաւորուած լինին թանձրացեալ և կենդանի ծանօթութիւններով և իւրեանց վերացական գիտութիւնների համար պիտի ունենան զգայական իրազննութեամբ ստացած աշխարհքի տեղեկութիւն այնպէս ինչպէս որ աշխարհքս այժմ է: Եւ պատրեմն աշխարհք տեսնելու առաքած երիտասարդները պէտք է ոչ թէ ծանրաբեռնուին, որն է մասնաւոր գիտնական պատուէր կատարելու պարտաւորութեամբ, այլ թող գնան և յատկապէս միայն տպաւորութիւնների ժողովներ: Նոքա կարևորութիւն չունին տուն վերադառնալ մի որ և է քնարանով Սորբոնի դոկտորութեան տիտղոսի արժանանալու համար, այլ պէտք է իւրեանց ապագայ աշակերտներին հաղորդեն միւս ուժեղ ազգերի մեծութիւնից և արդիւնաւորութիւնից ստացած դալար տպաւորութիւնները, Թոշակաւունները ընտրութեան համար բարեգործը միակ պայման է դրել, որ նոքա անգլիական լեզու գիտնան, երիտասարդ լինին և աշխոյժ հոգի ունենան:

Ս. Մ.

ԳՊՐՈՅԸ Ե ՌԻՍՈՒՅԻՉԸ.

(ԱՂՕԼՅ ԴԻՍԵՐՎԼԵԴԻ ՄԱՆԿԱՎԱՐԹԱԿԱՆ ՄՏԲԵՐՈՅ):

Դպրոցը ապագան ստեղծող ոյժերից մէկն է. եթէ այդ ոյժը լաւ է կազմակերպուած և ուղղուած ուր հարկն է, ապա նա հանդէս է գալիս իբրեւ բարերար ոյժ. սակայն միայն երազողներն են, որ դպրոցը գլխաւոր ծառայութիւն մատուցանողը կամ պատասխանատուն են անուանում:

«Ում ձեռքումն է դպրոցը նրա ձեռքումն է և ապագան. Զափազանցութիւն է այդ հետեւապէս

և ուղիղ չէ՝ Աւսուցիչներն արտայայտած միտք չէ այդ, թէ և նորա յաճախ կրկնել են նոյնը, Աւսու- նարանք ապագայ ստեղծագործելու գործին միմիայն նպաստում է որոշ չափով՝ ահա իրողութիւնը, և այդ միանգամայն բաւական է:

Դպրոցն անկարող է առանձնանալ կեանքից, ուստի և կրում է իւր վերայ «Ժամանակի կնիքը»՝ նա է և կմնայ որպէս մի հաստատութիւն, որ կա- խումն ունի կեանքից:

Ժողովրդական է կոչուում տարրական դպրոցը՝ ոչ այն պատճառով, ի հարկ է, որ տալիս է ժողո- վրդի որոշ մասին այն տարրական կրթութիւնը, որն անհրաժեշտ են համարում նորա համար, «Ժողո- վրդական» կոչուելու իրաւունք ունի այն դպրոցը միայն, որի մէջ ամբողջ ժողովրդի բոլոր զաւակ- ները միատեսակ կրթութիւն են ստանում:

Նրանի՛ չէր, սկսէինք վերջապէս ուղարկել մի բոլոր զաւակներին միևնոյն դպրոցը, որպէս զի նո- քա սովորէին այստեղ մասնակից լինել միմեանց ու- բախութեան և վշտին: Արքան բարերար հետեանք կարող էր ունենալ այդ միջոցը մեր որդւոց յետա- գայ ամբողջ կեանքում՝ նոցա մէջ համերաշխու- թիւն, համերատարութիւն և մարդասիրութիւն զարգացնելու համար: Մարդկանց համար միութիւնը յառաջ է բերում ոչ այնքան խօսքերի և խրատ- ների, որքան սովորութեան և փորձի միջոցով:

Դպրոցի ծրագիրն է՝ ծանաչել բարձրը, ան- տեսանելին և յաւիտենականը, ձգտել դէպի գերա- կայ գաղափարը և գաղափարական կեանքը, անձնա- կան շահերը ենթարկել ընդհանրութեան, այսինքն մարդկութեան, ժողովրդի կամ համայնքի պա- հանջներին, ապրել համայնքի սգոյի համար և գորան ձգտել միշտ ազատօրէն զարգացնել մար- դու ձիրքերը և կարողութիւնները, բնաւորու- թեան, զգացմունքի և հոգու անհատական կողմե- րը՝ զարգացնել հակումն դէպի ինքնակրթութիւն, վճռականութիւն, առհասարակ անկախութիւն:

Մարդկանց ուսուցման և դաստիարակութեան գործում առաւելապէս աչքի առաջ պէտք է ու- նենալ բարձրը և ընդհանուրը, Մենք իրաւունք չու- նինք սովորեցնելու այն ամէնը, ինչ որ ըզդէմ է բնութեան և մարդկային արժանապատուութեան:

Աւսուցումը պէտք է ձգտէ դէպի ճշմարտու- թիւնը, ճշմարտութիւնը պէտք է ուսուցանել, և ճշմարտութիւնը պէտք է ծանաչէ մանուկը, Այն

ամէնը ինչ որ սուտ, սխալ և կասկածելի է, պէտք է հալածուի դպրոցից:

Մանուկներին ուսուցանելիս մենք պէտք է համակերպուենք նոցա ապագայ կեանքի պահանջ- ներին ու բնաւորութեան, Անգործադրելի գիտու- թիւններն անօգուտ են միանգամայն, նորա դուր ծանարեռնում են հոգին և նմանում են թաղած դանձի կամ անմշակ հողի:

Դաստատութեան առարկաների ընտրութեան և գնահատութեան ժամանակ պէտք է ի նկատի ու- նենանք թէ արդեօք յարմար են նոքա և ինչ չա- փով՝ ճշմարիտ, ժամանակի խկական պահանջներին համապատասխան և հաստատուն կրթութիւն յա- աջ բերելու:

Իսկական ուսուցիչը իւր հաղորդած ծանո- թութիւնները համարում է լոկ նիւթ, որ ապա աշակերտները պիտի մշակեն: Աւսուցչի գործը միայն չէ, որ աշակերտին հաղորդէ որոշ տեղեկութիւն- ներ կամ հարկադրէ նորան այդ տեղեկութիւնները քարացած ձևով գլուխը լեցնել, Աչ.—մանկավար- ժական արուեստը նորանում է, որ կարողութիւն զարգացնէ աշակերտի մէջ նիւթը մշակելու:

Աւսուցանել—նշանակում է գրգեղ մանկանը, որ նա ինքն իրեն սովորեցնէ, Աւսուցումը մի ա- ուղնորդութիւն է մտքի ինքնակրթութեան գոր- ծում:

Եթէ ճշմարտութիւնը առաջին բոպէներից իսկ աշակերտի գիտակցական մասնակցութեամբ չի ընդունւում, կնեկայանայ նորան յետոյ և նորա հոգու մէջ կը մնայ որպէս մի դատարկ հիշելիւն, մի այնպիսի իլլաշնող ձայն, որ մոլորեցնում է և թոյլ չի տալիս, որ ամբողջ հոգւով և կենդանի կերպով ըմբռնէ ճշմարտութիւնը՝ նաև այն ժամանակ, երբ կարող էր համապատասխան լինել և իրօք համա- պատասխան կլինէր, նորա մէջ զարթնող ձգտման դէպի ճշմարտութիւնը:

Հասկացողութիւն տեղի ունի միմիայն այն դէպքում, երբ ճշմարտութեան վերահասութիւնը ձեռք է բերում սեփական ջանքերի շնորհիւ, Ծա- նօթութիւնները կարելի է ուրիշից ընդունել, բայց հասկացողութիւնը ոչ:

Եթէ մենք աշակերտին ստիպում ենք կրկնել իւր չհասկացած մտքերը՝ մի խոշոր սխալ ենք գոր- ծում, իսկ եթէ զգացմունքներն ևս սերտելու նիւթ

ենք դարձնում: բիծ ենք դնում նորա հոգեւոր կեանքի մարրութեան և անմեղութեան վերայ:

Իւրաքանչիւր իսկական ծանաչողութեան միակ հաստատուն հիմքն է՝ առարկաների անմիջական գիտողութիւնը: սեպհական փորձը և երեոյթներին անձամբ ներկայ գտնուելը: Փորձից բղխում է գիտութիւն: որ բմբունման և գիտողութեան միջոցաւ առաջնորդում է դէպի օրէնք ու կանոն: իսկ այդ տեղից դէպի ակներև ճշմարտութիւն և սկզբունք: Այս է դէպի գիտական ծանաչողութիւն առաջնորդող ծանապարհը:

Աշակերտի ուշադրութիւնը դէպի բառերը թուլացնում է նորա ուշադրութիւնը դէպի զաւաճարները: հետեւապէս և նոցա հասկանալու ձրգտումը: մինչդեռ ուսուցման բուն նպատակը վերջինս է:

Ոչ մի բան այնպէս չի ճնշում հոգու բարձր կարողութիւնները և այնպէս թեւակտուր չի անում: որչափ յիշողութեան ծանրաբեռնումը: նիւթի մեծ պաշար բառացի կերպով անգիր սերտելը: այդ անպէտք զանգուածը յիշողութեան մէջ պահելու պարտաւորութեամբ լինելը:

(Կր շարունակուի):

ՍՈՒՐ ՄՏՔԵՐ.

Թշնամիների դէմ տաճած ատելութիւնը նոցա աւելի քիչ է վնասում քան մեզ:

Ամենաբաղդաւորը նա է: որ առանց յաղղի էլ բաղդաւոր է:

Միայնութիւնն աշխատողի համար բարիք է: անգործի համար չարիք:

Շատ տէրեր բռնակալ չէին լինի: եթէ նոցա հպատակները ստրուկներ չլինէին:

Կոպիտը սիրում է ճշմարտութեան գրօշակի տակ ծածկուել:

Խելօք մարդը թողնում է: որ կինը վերջին խօսքն ասէ: բայց գործի մէջ տղամարդ է մնում:

Ինչ որ մեծերի համար փառասիրութիւն է: սնափառութիւն է փոքրերի համար:

Բարեբաւի մահուան համար աւելի ափսոսում են քան ցաւում:

Այն մարդիկ: որոնց կարելի է մատին փաթածել՝ յաճախ աւելի վտանգաւոր են քան կարծուում է: կարելի չի լինում նոցա կրկին յետանել:

Խելօքը հիանում է միայն այն բանի վերայ ինչ որ հասկանում է: յիմարն այն բանի՝ ինչ որ չի հասկանում:

Գեղեցիկ բան է սեփական աշխատութեամբ բաղդ ձեռք բերելը: ևս առաւել գովելի՝ անբաղդութեան դիմանալը:

Բաւական է: որ ապերախտ չեն գտնուել դէպի քեզ՝ կարող ևս ասել: թէ երախտադէտ են եղել:

Սրիկային ցոյց տուած գութը գողութիւն է պատուաւոր մարդկութեան նկատմամբ:

Խիղճը բարւոյ օրէնքն է: օրէնքը վատութեան խիղճը:

Յաճախ ստուերից ենք իմանում: որ մօտիկ մի տեղ լոյս կայ:

Ամենափառմար բռնակալը երես տուած երկխոսն է:

Երբեմն կոյր լինելն ամենալաւ տեսողութիւնն է: սխալն է երբեմն մեր ամենամեծ բաղդի պատճառը:



ԳՐԱԽՅՈՒՄԻԻՆ.

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ: Զօն Ստիւարտ Միլլի: Թարգմ: Ա. Կ.: Հրատարակութիւն Մ. Գ. Ը.: Մոսկուա: 1898 թ.: գինն է 1 ռ. 50 կ.

Այս գտտական գրութեան թարգմանիչը տառւմ է: «Ո՛ր նկատի ունենալով: որ մեր զրականութեան մէջ պակասում են այնպիսի հրատարակութիւնների: որոնք կարողանային զարգացնել մեր հասարակութեան մէջ զիտակցական ու քննական վերաբերութիւն դէպի մարդկային կեանքի այլ և այլ հասարակական երկոյթները և տարածելն մեր մէջ հիմնաւոր կերպով բացատրուած հասկացողութիւններ... — մենք ձեռնարկեցինք հրատարակել այդ ուղղութեամբ մի քանի գրքեր... Հրատարակութիւնների շարքը սկսվում է Զօն Ստիւարտ Միլլի Ազատութեան մասին: տրակտատի և պ. Տ. Աւետիքեանի «Իրանդիայի դատը»